



5 ՀՀ նախագահի թեկնածուներու

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ 2008

Compiled by: GlobalHye Information Services

Մերժ Սարգսյանի

Արտաքին հարաբերության ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Արագ փոփոխվող աշխարհը՝ արդի մարտահրավերներին զուգահեռ, Հայաստանի համար բացում է նոր հնարավորությունների պատուհան:

Մեր երկրի արտաքին քաղաքականությունը պետք է դառնա ավելի ակտիվ և նախաձեռնող՝ ապահովելով Հայաստանի ազդեցիկ մասնակցությունը միջազգային և հատկապես տարածաշրջանային գործընթացներին, որի համար անհրաժեշտ է.

- բազմակողմ և միջպետական երկկողմ հարաբերությունների ընդլայնում ու խորացում, դրանց ներդաշնակ համադրում, ինչը բարենպաստ պայմաններ կստեղծի այլ երկրների հետ քաղաքական, տնտեսական կապերի զարգացման, ապրանքաշրջանառության աճի, մշակութային համագործակցության խթանման համար,
- միջազգային կառույցներին անդամակցության շարունակում և համագործակցության խորացում՝ ինտեգրման գործընթացի հիմքում դնելով մեր երկրի քաղաքական, տնտեսական և այլ բնույթի շահերի պաշտպանության առաջնայնությունը,

- տեղեկատվության և կապի ժամանակակից տեխնոլոգիաների բացառիկ հնարավորությունների կիրառում՝ միջազգային գործակցության և համայն հայության համախմբվածության ու համագործակցության համար, ինչն էլ կբազմապատկի մեր մրցակցային առավելությունները,
- այլ երկրների հետ տնտեսական, ֆինանսական և մշակութային համագործակցության կառուցում միջազգայնորեն ընդունված կանոններով,
- քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների համար միջազգային լավագույն փորձի և չափորոշիչների ներդրում, ինչը մի կողմից կբարձրացնի նրանց գործունեության արդյունավետությունը, մյուս կողմից կխթանի հարաբերությունները արտասահմանյան գործընկերների հետ, այդ թվում՝ մեխանիզմներ ստեղծելով արտերկրում մեր քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների շահերի պաշտպանության համար:

Արցախյան հիմնախնդիրը լինելու է ՀՀ Նախագահի գործողությունների կիզակետում:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հարցը խարսխվելու է հետևյալ սկզբունքների վրա.

- պետք է միջազգայնորեն ճանաչվի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը և պայմաններ ստեղծվեն դրա իրականացման համար,
- պետք է ապահովվի ԼՂՀ բնակչության և սահմանների անվտանգությունը,
- ՀՀ-ն և ԼՂՀ-ն պետք է ունենան ընդհանուր սահման:

Յուրաքանչյուր ողջամիտ մարդու համար ակնհայտ է, որ ամեն մի՝ քիչ թե շատ բարդ գործընթաց, առավել ևս՝ հակամարտության կարգավորում, հնարավոր չէ իրականացնել միանգամից, մեկ օրում, այն մի քանի քայլով իրականացվող գործողությունների ամբողջություն է: Ղարաբաղյան հակամարտության բոլոր կողմերի միջև համաձայնությունը պետք է մեկ փաթեթի մեջ ներառի բոլոր հարցերի լուծումներն ու այն մեխանիզմները, որոնք պետք է ապահովեն այդ լուծումների իրականացումը:

Մենք պետք է կառուցենք բնականոն հարաբերություններ մեր հարևան պետությունների հետ: Մենք պատրաստակամ ենք լինելու Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու սահմանների բացման հարցում՝ համարելով, որ դրա հիմքում չեն կարող ընկած լինել ո՛չ Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունից հրաժարվելու, ո՛չ ԼՂ հակամարտության հետ կապված և ոչ էլ այլ նախապայմաններ:

2.2. Մեր տարածաշրջանը գտնվում է տարբեր աշխարհաքաղաքական ուժերի շահերի կենտրոնում, և հակասություններն անխուսափելի են:

Ազգային անվտանգության ռազմավարությունն ուղղվելու է մեր երկրի ու տարածաշրջանի կայունության ապահովմանը և հակասությունների հաղթահարմանը, ինչն առաջին հերթին նշանակում է՝ անկախություն, պետության և ժողովրդի պաշտպանվածություն, խաղաղություն և միջազգային համագործակցություն, հայապահպանություն ու բարեկեցություն:

Տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը թելադրում է կարգաբերված, արդյունավետ պաշտպանության և անվտանգության համակարգ ունենալու անհրաժեշտություն: Այդ համակարգի գլխավոր, բայց ոչ միակ օղակը բանակն է:

Առաջիկա տարիներին անվտանգության հիմնական խնդիրն է պետական կառավարման մարմինների մասնակցությամբ ազգային անվտանգության միասնական, բազմաստիճան համակարգի կառուցումը: Մենք պետք է պատրաստ լինենք հակազդելու բոլոր սպառնալիքներին և վտանգներին:

Վահան Հովհաննեսյանի

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Անցած տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը գերազանցապես վարել է արտաքին թելադրանքներին արձագանքելու քաղաքականություն:

Այսօր՝ տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական տեղաշարժերի ծավալման ու խորացման պայմաններում, դերակատար տերությունները փորձում են ուղղորդել և հունավորել Հայաստանի արտաքին քաղաքականությունը իրենց սեփական՝ հիմնականում մեկը մյուսին հակադրվող շահերով՝ կաշկանդելով

մեր դիվանագիտությունը Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացով:

Գերտերությունների դիմակայությունը տարածաշրջանում առաջացրել է օրեցօր սրվող մրցակցություն, հատկապես՝ հարավկովկասյան պետությունների միջև: Տարածաշրջանային մրցակցությունում հաղթելու համար ակտիվ և նախաձեռնողական արտաքին քաղաքականություն վարելն անհրաժեշտություն է և հրամայական: Այս պայմաններում հիշյալ ուժերի հետ փոխհարաբերությունները կառուցելու են մեր շահերի շուրջ համաձայնության հասնելու միջոցով:

Արդյունավետ մրցակցության համար ընթացող պայքարում սեփական ինքնությունն ու քաղաքական դիմագիծը պահպանելու, միջազգային թատերաբեմում Հայաստանն արժանապատվորեն ներկայացնելու համար մեր պետությունից պահանջվում է ուժերի գերլարում, կշռադատված, նախահարձակ ու պահանջատիրական արտաքին քաղաքականություն: Տարածաշրջանում և նրա հարեւանությամբ ընթացող քաղաքական և ռազմական իրադարձությունները, իրենց շահերը հետապնդող ուժային կենտրոնների դիմակայությունը և սպասվող աշխարհաքաղաքական տեղաշարժերն առավել ևս թելադրում են, որ արտաքին քաղաքականությունն ուղղված լինի հայ ժողովրդի կենսական պահանջներից բխող ռազմավարական խնդիրների իրականացմանը, մեր պետության զարգացմանն ու հզորացմանը:

Արտաքին քաղաքական հարաբերություններում անհրաժեշտ է առաջնորդվել բացառապես ազգային շահերով՝ առանց տուրք տալու այս կամ այն կուսակցության, սոցիալական դասի կամ պետական-քաղաքական գործչի մղումներին: Նման արտաքին քաղաքականություն վարելու անհրաժեշտ ենթահող կլինի երկրում քաղաքական և տնտեսական համակարգերի բարեփոխումը՝ հիմնված ժողովրդավարական և իրավական պետության հիմնարար սկզբունքների վրա:

Հայաստանի Հանրապետության ներքին կյանքում մեր առաջարկած համակարգային փոփոխությունները կապահովեն լուրջ նախադրյալներ ինչպես տարածաշրջանային քաղաքական և

տնտեսական, այնպես էլ երկրի աշխարհաքաղաքական մրցունակության ապահովման համար: Հայաստանի առաջնահերթություններից է եվրոինտեգրման գործընթացների խորացումը՝ ապահովելով երկրի համապատասխանեցումը եվրոմիության չափանիշներին:

Արցախյան հիմնախնդիրը Հայ Դատի բաղկացուցիչ մասն է: Մինչև ազատագրված Արցախի կարգավիճակի միջազգային ճանաչումը՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է սատարի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային կապերի հաստատմանն ու զարգացմանը: Հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցություններում պետք է ապահովել ԼՂՀ ուղղակի մասնակցությունը: Հիմնախնդրի կարգավորումը պետք է միանշանակորեն ընդունելի լինի Հայաստանի եւ Արցախի քաղաքացիների համար:

Թուրքիայի հետ հարաբերությունները մնում են չկարգավորված, քանի որ այս պետությունը շարունակում է Հայաստանի նկատմամբ իր թշնամական քաղաքականությունը եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, հայ-թուրքական սահմանը բացելու դիմաց նախապայմաններ է ներկայացնում: Երկկողմ հարաբերություններ կառուցելու նման ոճը անընդունելի է: Հայաստանը պետք է բարձրացնի Թուրքիայի թշնամական վերաբերմունքի, հայ-թուրքական սահմանի եւ Հայոց Ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվության հարցերը միջազգային ատյաններում: Հայաստանի եւ Սփյուռքի համատեղ ջանքերով Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցում վերջին տարիներին ձեռք բերված արդյունքները հիմք են տալիս այս ուղղությամբ աշխատանք կատարել նաեւ թուրք հասարակության հետ:

Մեր անմիջական հարեւանների՝ Վրաստանի եւ Իրանի հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի համար:

Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների ձեւավորումը լավ հնարավորություններ կստեղծի Հայաստանի համար մի շարք առաջնային խնդիրների լուծման համար: Հայ-վրացական հարաբերությունները կարելու է ինչպես տարածաշրջանում անվտանգության ապահովման եւ կայունության պահպանման, հարավկովկասյան երկրների եվրոինտեգրման գործընթացների խորացման, այնպես էլ երկկողմ փոխշահավետ համագործակցության եւ Ջավախքի հայության իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Հաշվի առնելով Ջավախքի առանձնահատուկ պայմանները եւ նման հարցերում միջազգային փորձը՝ Հայաստանը պետք է ջանք գործադրի հարեւան Վրաստանի հետ երկկողմ համաձայնագրեր կնքելու՝ Ջավախքի եւ հարակից շրջաններում ավանդաբար ապրող հայությանը տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցելու համար:

Իրանի Իսլամական Հանրապետությունը տարածաշրջանի ծանրակշիռ դերակատարներից է: Այս երկրի հավասարակշռված քաղաքականությունը նպաստում է Հարավային Կովկասում կայունության պահպանմանը: Հայաստան-Իրան հարաբերություններում էներգետիկ, առեւտրատնտեսական, տրանսպորտային հաղորդակցության բնագավառներում համագործակցության զարգացման լայն հնարավորություններ կան, որոնք թույլ են տալիս մշակել եւ իրականացնել ռազմավարական ծրագրեր:

Լեւոն Տեր-Պետրոսյանի

Արտաքին քաղաքականության ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Հայաստանի նոր իշխանությունների առջեւ կանգնած խնդիրների շարքում իրենց կարեւորությամբ առանձնանում են.

Ազգային շահերի վրա հիմնված հավասարակշիռ եւ կառուցողական դիվանագիտության վերականգնումը, աշխարհի բոլոր երկրների հետ բարեկամության եւ փոխշահավետ համագործակցության ձգտումը.

Միջազգային կազմակերպությունների առջեւ ստանձնած պարտավորությունների կատարումը, նախկինում կնքված միջպետական բոլոր պայմանագրերի նկատմամբ հավատարմության վերահավաստումը.

Բարիդրացիական հարաբերությունների ամրապնդումն ու խորացումը անմիջական հարեւանների՝ Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի հետ, կառուցողական ջանքերի գործադրումը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ.

Հայաստանի քաղաքական եւ տնտեսական մեկուսացման հաղթահարումը, միջազգային եւ տարածաշրջանային տնտեսական համակարգերում երկրի ներգրավվածության աստիճանի բարձրացումը.

Լեւոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում քաղաքական կամքի դրսևորումը, հանդես գալով արցախահայության ինքնորոշման իրավունքի պաշտպանության եւ հարցի լուծման փոխզիջումային տարբերակի որոնման դիրքերից:

Արթուր Բաղդասարյանի

Արտաքին հարաբերություն ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



Հայաստանի Հանրապետության համար, որը փոքր երկիր է, գտնվում է խիստ բարդ տարածաշրջանում և պետք է հայանպաստ լուծում տա Լեռնային Ղարաբաղի խնդրին, ակտիվ, դիմամիկ և նախաձեռնողական ճկուն արտաքին քաղաքականությունն ուղղակի հրամայական է: Սակայն մեր երկիրը հիմնականում պարզապես արձագանքում է Հայաստանին առնչվող այս կամ այն իրադարձությանը: Նման քաղաքականությունն արդեն չի ընկալվում

Հայաստանի արտաքին քաղաքական գործընկերների շրջանում, որոնք ակնկալում են հստակ դիրքորոշումներ: Այս ամենի հետևանքով մենք հայտնվել ենք տարածաշրջանային մեկուսացման մեջ՝ դուրս մնալով, քիչ, թե շատ կարևոր բոլոր ծրագրերից (Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղ, Կարս-Ախալքալակ-Թբիլիսի-Բաքու երկաթգծի կառուցում, ինչի շինարարության պայմանագիրն արդեն ստորագրվել է): Մեր արտաքին քաղաքականությունը պետք է որդեգրի հետևյալ մոտեցումները.

- մշակել և ընդունել ՀՀ արտաքին քաղաքական դոկտրինը,
- միջազգային հարաբերությունների և իրավունքի փոփոխման ժամանակաշրջանում Հայաստանը պետք է պարբերաբար հանդես գա նոր նախաձեռնություններով՝ փորձելով համաշխարհային գործընթացները դարձնել առավել նպաստավոր երկրի համար,
- անհրաժեշտ է բարձրացնել Սփյուռքի հետ համագործակցության աստիճանը՝ ավելացնելով օգտակար գործողության գործակիցը,
- Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը պետք է լինի անդամակցությունը Եվրոպական միությանը: Ակնհայտ է, որ սա երկարաժամկետ ծրագիր է և չի կարող իրականություն դառնալ մի քանի տարիների ընթացքում, սակայն Հայաստանը պետք է հստակորեն ընթանա այս ճանապարհով, որն, առաջին հերթին, նշանակում է բոլոր ոլորտներում լուրջ բարեփոխումների իրականացում, որպեսզի մեր երկիրն ավելի ու ավելի մոտենա Եվրոպական միությանն անդամակցության չափանիշերին, Հայաստանը լիիրավ պետք է ներգրավվի տարածաշրջանային էներգետիկ և կոմունիկացիոն նախագծերում,
- Հայաստանը Ռուսաստանի հետ պետք է զարգացնի իր ռազմավարական հարաբերությունները: Երկու երկրների գործընկերային հարաբերությունները պետք է հենվեն իրավահավասարության, բարեկամության և փոխադարձ շահերի վրա,
- ԱՄՆ-ի հետ հարաբերությունները պետք է խորացվեն՝ կառուցվելով բարեկամության և գործընկերության հիման վրա,
- Չինաստանի, Հնդկաստանի և Իրանի հետ պետք է խորացնել հարաբերությունները, զարգացնել տնտեսական համագործակցությունը,
- խորհրդարանական և հասարակական դիվանագիտության ակտիվացումը կարող է ծառայել երկրի շահերին,
- հայ-թուրքական հարաբերությունների հաստատումը՝ առանց նախապայմանների և սահմանի բացումը, Կարս-յումրի երկաթուղու վերագործարկումը կարևոր են ինչպես երկու երկրների, այնպես էլ՝ տարածաշրջանի համար,
- Եվրոպական միության հետ իրականացվող նոր հարևանության ծրագիրը, ինչպես նաև

Եվրոատլանտյան դաշինքի հետ հարաբերությունների խորացումը, համաձայնեցված անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը կարևոր նշանակություն ունի Հայաստանի տնտեսության քաղաքական համակարգի զարգացման, անվտանգության մեխանիզմների արդիականացման և ժողովրդավարության կառուցման համար: Ժողովրդավարության կայացումը Հայաստանում կամրապնդի մեր դիրքերը միջազգային հարաբերություններում և Լեռնային Ղարաբաղի շուրջ ընթացող բանակցություններում:

Վազգեն Մանուկյանին

Արտաքին հարաբերություններ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ



1. Անհմաստ է խոսել արցախյան հարցի լիարժեք եւ կայուն կարգավորման մասին, առանց բանակցություններին ԼՂՀ-ի անմիջական եւ իրավահավասար մասնակցության: Այդ բանակցությունների հիմնական նպատակը պետք է լինի արցախահայության՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա արդեն իսկ իրականացրած դե ֆակտո անկախության միջազգայնորեն դե յուրե ճանաչումը՝ հստակեցնելով նրա սահմանները եւ ապահովելով նրա բնական սահմանի առկայությունը ՀՀ-ի հետ: Բանակցությունների արդյունքները պետք է ԼՂՀ-ի բնակչության անվտանգության հատուկ երաշխիքներ ստեղծեն, պայմաններ ապահովեն նրա սոցիալ-տնտեսական բնականոն զարգացման, փախստականների եւ բռնի տեղահանվածների վերաբնակեցման լիարժեք հնարավորություն ստեղծելու համար: Խնդրի լուծման կայունության երաշխիքը էապես կախված է նաեւ հակամարտող կողմերի ժողովրդավարության աստիճանից:

2. Եվրոպական միությանն անդամակցելը պետք է դիտվի ՀՀ-ի արտաքին (նաեւ ներքին) քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը: Անհրաժեշտ է լիարժեք իրականացնել ինչպես ԵԽ-ի առջեւ ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները, այնպես էլ ԵՄ-ՀՀ Եվրոպական հարեւանության գործողությունների ծրագրով նախատեսված բարեփոխումները՝ հավատարիմ մնալով դրանց բովանդակությանը:

3. Հայաստան-Ռուսաստանի Ղաշնություն հարաբերությունները պետք է զարգացնել ռազմական, սոցիալ-տնտեսական, մշակութային, գիտա-կրթական եւ այլ ոլորտներում: ՀՀ-ն եւ ՌԴ-ն մշտապես պետք է ունենան հատուկ հարաբերություններ՝ անկախ անվտանգության համակարգերից:

4. ՀՀ-ն պետք է ակտիվ արտաքին քաղաքականություն վարի՝ նպաստելով տարածաշրջանային ինտեգրացիային, նաեւ խորացնելով բազմաբնույթ հարաբերությունները Արեւելքի մեր հարեւանների՝ հատկապես Իրանի եւ Արաբական երկրների հետ:

5. ՀՀ-ն պետք է անշեղորեն իրականացնի միջազգայնորեն ստանձնած բոլոր պարտավորությունները, ակտիվ մասնակցություն ունենա միջազգային համընդհանուր մարտահրավերների, մասնավորապես՝ ահաբեկչության դեմ պայքարում:

6. Անհրաժեշտ է խորացնել Վրաստանի հետ փոխշահավետ եւ գործընկերային հարաբերությունները: ՀՀ-ն մշտապես պետք է ուշադրության կենտրոնում պահի վիրահայության խնդիրները: Միջազգային իրավական նորմերը հաշվի առնելով՝ պետք է Վրաստանի հետ բանակցությունների միջոցով փորձել լուծում տալ Ջավախքում հայոց լեզվի տարածաշրջանային կարգավիճակի հարցին: Վրաստանի հետ կնքվելիք մեծ միջպետական պայմանագրի շրջանակում խորացնել ՀՀ-Ջավախք կապերը գիտական, կրթական եւ մշակութային ոլորտներում:

7. Բարելավել հայ-թուրքական հարաբերությունները՝ նպատակ ունենալով նաև սահմանների բացումը: Այդ խնդրի լուծումը, սակայն, չպետք է իրականացվի ազգային խնդիրների եւ արժանապատվության ոտնահարման գնով:

8. ՀՀ դեսպանությունների միջոցով ապահովել արտերկրում գտնվող մեր հայրենակիցների իրավունքների լիարժեք պաշտպանությունը:

Վերը նշված ուղղություններով համակարգային փոփոխությունների իրականացումը ենթադրում է խորը վերլուծությունների վրա հիմնված ճյուղային զարգացման կոնկրետ ծրագրեր: Այդ նպատակով նախատեսվում է ստեղծել գիտահետազոտական-ռազմավարական պետական կենտրոններ, որտեղ կմշակվեն միջնաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրեր՝ արտաքին քաղաքական, ներքին կյանքի, սոցիալ-դեմոգրաֆիական, պաշտպանական, անվտանգության, տնտեսության եւ այլ ոլորտների համար: Այդ կենտրոններում պետք է համախմբել հանրապետության գիտական ողջ պոտենցիալը: Նշված համակարգային բարեփոխումները հնարավորություն կտան իրականացնելու տարատեսակ մասշտաբային ազգային ծրագրեր: Ըստ այդմ, պետության ուշադրության կենտրոնում, այլ կարելուր հարցերից զատ, մշտապես կլինեն.

####

Compiled by

GlobalHye Information Services

Globalhye
& Associates

www.GlobalHye.com

You received this email because you have shown interest in current events, politics, international relations, national security issues, therefore you are part of a recurring email distribution list.

If you wish to change your contact information, or if you wish to be removed from this email distribution list, please reply to this email and write REMOVE.